ռաջ: Նա անզգայ է մնացել ժամանակի պահանջի դէմ: Ուրեմն ինչ կապ, յարաբերութիւն կարող է մնալ այն առաջնորդողի և առաջնորդուածի մէջ, երբ առաջնորդողը յետ, իսկ առաջնորդուածը առաջ է գնում:

Եթէ չեմ սխալւում, կարծեմ, մենք այս վիճակի մէջ ենք գտնւում այժմ:

Բայց ինչ չարիք կար, կէսարցնեն ինձանից, մի ճանապարհորդական տետրիկ համար, իրար վերայ ածել աղգն ու ցեղը, խառնել պատմութեան տակն ու գլուխը:

Ես ներողութիւն կ'խնդրէի մեծ. ունկնդիրներից իւրեանց յայտնելու, թէ այն երկիրը, ուր ես մի քանի ամիս առաջ պտտեցի, նա ինձանում արթ-

---

Բղնունեաց ծովի արևելեան եզերքումը, Վանից 7 ժամ հեռաւորութեան վերայ շինված է Աստպարածին անունով վանքը և գիւղը: Դա ժամանակով կրօնաւորաց տեղ է եղել, բայց գիւղացոց յաղագվել է տալածել կրօնաւորներին և այժմ ինքեանք են կառավարում վանքը, կամ կառավարվում են վանքով: Դորա բնակիչները կոչվում են Տիրամօր մարդիկ, որոնք ոչ միայն Վասպուրականի, այլ և Պարսկա-Հայաստանումը Դիադինումը և Ալաշկերտումը յայտնի են իւրեանց աներես և անխիղճ բնաւորութեամբ: Նորա բռնութեամբ քաշում տանում են խաւտուտիկ տորթեր, եղներ, կովեր: Այդ դունաւոր բիծերը նորա համարում են Տիրամօր նշանը, որով որոշվել են նորա մատաղացուները: Դրա համար է, որ այդ կողմերը այդ տեսակ կեն-